Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2024, Vol. 15, No. 1(43), մարտ, 5-17
https://doi.org/10.46991/BYSU:E/2024.15.1.005

ՇԱՀԱՆ ՊԵՐՊԵՐՅԱՆԻ «ԵՐԿՈՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ» ԵՐԿԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՍԻԼՎԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ*
Երևանի պետական համալսարան

XX դարի արևմտահայ փիլիսոփայական մտքի ամենահետաքրքիր ներկայացուցիչներից մեկի՝ Շահան Պերպերյանի ուսմունքը ժամանակի մասին դեռևս պատմափիլիսոփայական անդրադարձի չի ենթարկվել: Հոդվածում քննվում են ժամանակի պերպերյանական ընկալման յուրակերպությունները փիլիսոփայության պատմության համատեքստում: Այդ նպատակով ներկայացվել ու վերլուծվել են ժամանակի մասին Արիստոտելի, Պլոտինոսի, Օգոստինոս Երանելու, Կանտի ու Բերգսոնի հայացքները Պերպերյանի ուսմունքի հետ հարաբերության տեսանկյունից: Ցույց է տրվել, որ Պերպերյանի մոտեցումն ըստ էության շարունակում է նորպլատոնականության գիծը՝ առանձնապես մեծ ազդեցություն կրած լինելով Բերգսոնի՝ Տևողության մասին ուսմունքից:
Պերպերյանը տարբերակում է այսպես կոչված «ժամացուցային» կամ Արտաքին և «երաժշտական» կամ Ներքին ժամանակները՝ նախապատվությունը տալով վերջինին: Ներքին ժամանակը, ըստ նրա, պարունակում է հավաքական ոգեղենության միանգամից տրվածության հնարավորությունը: Պերպերյանը ցույց է տալիս, որ տևելու կարողության շնորհիվ մարդը ձեռք է բերում ստեղծարար ազատություն և կարող է ձևավորել ոչ միայն իր ապագան, այլև՝ անցյալը: Նմանապես, ժողովուրդը, ըստ արևմտահայ մտածողի, ազգ է դառնում, երբ իր գոյությունն ու լինելությունը բարձրացնում է ոգեկան մակարդակի: Ազգը, կառուցակազմելով իր պատմությունը, դառնում է «Հաւաքական անձնաւորութիւն»՝ իր անցնող ու մոռացության տրվող կյանքն ազատագրելով Արտաքին ժամանակի ջնջող վազքից ու հաստատելով հավաքական ներքին թանձրական Տևողության մեջ:

* **Սիլվա Պետրոսյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոցենտ
Сильва Петросян - кандидат философских наук, доцент кафедры истории и теории философии и логики ЕГУ
Silva Petrosyan - Doctor of Philosophy, associate professor of the Chair of History and Theory of Philosophy and Logic, YSU
Էլ. փոստ՝ silva.petrosyan@ysu.am, ORCID: https://orcid.org/0000-0002-7567-6887.

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 05.03.2024
Գրախոսվել է՝ 08.03.2024
Հաստատվել է՝ 29.03.2024
© The Author(s) 2024

Պերպերյանը Ներքին ժամանակին տիրելը կապում է հոգու ներկայության, սրբության հետ՝ նշելով, որ մարդիկ սխալ են հասկանում հավերժությունը՝ կարծելով, որ այն վերջում է գալու, այնինչ երանելի, սուրբ մարդն արդեն իսկ հավերժության մեջ է, քանի որ բոլոր ժամանակները կրում է իր ներսում:

Բանալի բառեր – *«ժամացուցային» ու «երաժշտական» ժամանակ, Ներքին ժամանակ, Տևողություն, Պերպերյան, Բերգսոն, Օգոստինոս, Կանտ*

Ի՞նչ է ժամանակը: Եթե ոչ ոք ինձ այդ մասին չի հարցնում, ես գիտեմ, թե ինչ է ժամանակը: Եթե ցանկանայի պատասխանել հարցնողին, ո՛չ, չգիտեմ...

Օգոստինոս Երանելի

Յաւերժը պետք է փնտռել ոչ թէ դէպի անցեալը ետ երթալով, ոչ ալ դէպի ապագան յոյս-անձկութեամբ զայն սպասելով, այլ զայն պետք է գտնել Ներկային իսկ մէջ, այդ ներկան դարձնելով ժամանակի բովանդակին ներկան: Վասն զի *Յաւերժը Ներկային իսկութիւնն է ինքնին...*

Շահան Պերպերյան

Շահան Պերպերյանը XX դարի արևմտահայ փիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչներից է: Նա ծնվել ու մեծացել է իմաստասիրական ոռոնումներով հագեցած միջավայրում: Նրա հայրը՝ Ռեթեոս Պերպերյանը, XIX դարավերջի արևմտահայ ամենաազդեցիկ իմաստասերներից է, որը ոչ միայն տեսական երկեր է գրել իմաստասիրական տարաբնույթ խնդիրների շուրջ[1], այլև իր բարոյագիտական, գեղագիտական ու մարդաբանական իդեալներն իրականացնելու նպատակով հիմնել է վարժարան ու կրթել խորազգաց ու իմաստասիրական մտասևեռումների ունակ մի ողջ սերունդ: Այդ սերնդից, թերևս, հարկ է նշել Ինտրային՝ Տիրան Չրաքյանին, ով իր գլխավոր երկը նվիրել է Ուսուցչին՝ «անայլայլ հիացմամբ»[2]:

Շահան Պերպերյանը շարունակել է հոր առաքելությունը և վարժարանական հաջորդ սերունդներին կրթել բարու, ճշմարիտի ու գեղեցիկի՝ իր կողմից գնահատելի չափանիշներով ու մոտեցումներով: Նա դասախոսություններ է

[1] Տե՛ս, օրինակ, **Ռ. Պէրպէրեան,** Հայրենասիրութիւն // Առաջին տերեւք, Կ. Պոլիս, 1877, էջ 107-120: **Նույնի՝** Գեղեցիկն ու գեղարուեստք // Երկու բանախոսութիւնք, Կ. Պոլիս, 1880, էջ 39-90 և այլն:

[2] **Տ. Չրաքյան,** Ներաշխարհ // **Տ. Չրաքյան,** Երկեր, Եր., 1981:

կարդացել իմաստասիրական մի շարք խնդրակարգերի շուրջ[3], սակայն կյանքի օրոք իր դասախոսությունների տեքստերը չի տպագրել[4]։ Գուցե հանգամանքները նրան հնարավորություն չեն տվել անհրաժեշտ ժամանակը տրամադրելու իր դասախոսությունների տեքստերին, վերածելու դրանք գրքերի ու հրատարակելու, գուցեև խստապահանջ է եղել տպագիր խոսքի հանդեպ։ Ինչևէ, շնորհիվ իր նվիրյալ ունկնդիրների, նրա դասախոսությունների գրառված տեքստերը խնամքով հավաքվել ու հրատարակվել են՝ սերունդների համար պահելով Շահան Պերպերյան փիլիսոփայի մտորումների ընթացքն ու ժամանակի փիլիսոփայական ուսմունքների բազմազանության մեջ նրա կատարած ընտրությունները։

Այդուհանդերձ, կան որոշ երկեր, որ Պերպերյանը հրատարակել է՝ դրանցում հայտակերպելով իր ժամանակակիցներին հղվելիք կարևոր ուղերձներ։ Անդրադառնանք դրանցից մեկին՝ «Երկու ժամանակները» իմաստասիրական ակնարկին, որը գրվել է «Ամանորի մը առթիվ»՝ փորձելով բացահայտել այդ գողտրիկ երկում արտացոլված խորքային մոտեցումներն ու լուծումները փիլիսոփայական մտքի զարգացման համապատկերում։

Ամանորը տարվա ամենահակասական պահերից մեկն է. այն մի կողմից խրախճանքների, մանկության աշխարհ վերադառնալու, հրաշքներին հավատալու, անհոգության շրջան է, մյուս կողմից՝ փաստում այն բանի, որ «կեանքը, չսելու համար իրենց էութիւնն իսկ, կտոր կտոր – իմա՝ վայրկեան առ վայրկեան – Անցեալ կոչուած ***անէին*** անդունդը կգլորէ»[5] (ընդգծումը հեղինակինն է)։ Եվ այդ անդունդի առջև ցավագին գլխապտույտ չունենալու համար է, ըստ Պերպերյանի, որ մարդիկ իրենց տալիս են կերուխումի՝ «մէկ գլխապտոյտը ուրիշով մը ջանալով փոխարինել»։ Մարդիկ կարծես թե փորձում են պահել հեռացող կյանքը՝ կլանելով սնունդը, որն իր մեջ ունի կյանքի խորհրդաբանությունը, և որքան մեծ է ժամանակի հոսել-անցնելու ծնած ու գուցեև չգիտակցված ցավը, այնքան ավելի շատ են մարդիկ տրվում խրախճանքների։ Իսկ արդյո՞ք ժամանակն անդառնալիորեն հեռանում է, թե՞ այն կարող է մնալ մեզ հետ։ Թերևս, նման հարցի պատասխանելու համար Պերպերյանն առաջարկում է տարբերակել երկու ժամանակ, որոնցից մեկն անվանում է «ժամացուցային», մյուսը՝ «երաժշտական»։

---

[3] Տե՛ս **Շ. Ռ. Պերպերյան**, Արժէքաբանութիւն կամ արժէքներու իմաստասիրութիւն, Անթիլիաս, 1976, **նույնի՝** Պատմութիւն իմաստասիրութեան, Անթիլիաս, 1977, **նույնի՝** Բնազանցութիւն, Անթիլիաս, 1978 և այլն։

[4] Վերոնշյալ տեքստերը Պերպերյանի մահվանից հետո հրատարակել են նրա երախտապարտ աշակերտները՝ իրենց «իմաստասէր մեծ Ուսուցիչին» ժառանգությունը պահպանելու փափագով։

[5] **Շ. Ռ. Պէրպերեան**, Երկու ժամանակները։ Ամանորի մը առթիվ, Երուսաղէմ, Տպարան Սրբոյ Հակոբեանց, 1943, էջ 5։

«Ժամացուցայինը» բոլորիս պարզ հայտնի չափվող ժամանակն է, որ բաղկացած է օրերից, ամիսներից, տարիներից։ Պերպերյանը հարցնում է՝ «Կա՞յ այդ ժամանակը», և պատասխանում, որ եթե նույնիսկ այն սկզբնապես եղած էլ չլիներ, հարկ էր այն ստեղծել հաշվումների, չափումների հեշտացման ու հասարակական կյանքը կարգավորելու համար[6]։ Սա այն ժամանակն է, որ «տեսնում ենք» հրաշալի կերպով հայտնագործված օրացույցների ու ժամացույցների շնորհիվ։ Այս ժամանակը «ոչ թե լեցուելու, որքան եղելութիւններու անջրպետը խորհելի դարձնելու»[7] համար է՝ դատարկ ու շարահար։ Պերպերյանն այս ժամանակը համարում է բացարձակ անտարբեր այն ամենի հանդեպ, ինչով լցվում է ինքը, և անդառնալի։ Այն համեմատելի է տարածության հետ, թեպետ ի հակակշիռ դրա երեք չափումների, ունի միայն մեկ չափում, որը կազմված է անցյալ, ներկա և ապագա եռանդամից։ Սակայն այդ եռանդամում գոյություն ունի միայն ներկան, քանի որ անցյալն «անէացած նախկին հիմա»-ն է, իսկ ապագան՝ գործնականում գոյություն չունեցողը՝ «անէ»-ն։ Իսկ ի՞նչ է ներկան։ Երկու ոչինչների մեջտեղում սեղմված՝ ներկան ընդամենը գոյության կետ է։ Սակայն մեր միտքը, ելնելով տարածության համաբանությունից, ընդլայնում է այդ կետը՝ նրան ընծայելով արդեն գոյություն չունեցող անցյալը և դեռ չեղած ապագան։ Ինչ խոսք, այս ժամանակն օգտակար է գործընթացները համապատասխանեցնելու և հասարակական կյանքը կարգավորելու համար, բայց հենց որ մարդն իր կյանքի ու գոյության մասին սկսում է մտածել այդ ժամանակի համատեքստում, այն դառնում է «մեր խորագոյն անձկութիւնը, մեր գոյութեան ամենէն աւելի կոտտացող ցաւը, մարդու կեանքին իսկագոյն եղերերգութիւնը»[8]։ Մարդը ցավագին կերպով գիտակցում է, որ իր գոյությունը սպրդում, հեռանում է իրենից, անէանում՝ իրեն ևս տանելով դեպի անէացում։

Սակայն, բարեբախտաբար, կա նաև մյուս՝ «երաժշտական» ժամանակը, որի գաղափարը, ըստ ամենայնի, Պերպերյանը փոխառել է Անրի Բերգսոնից։ «Քիչ մը քմահաճօրէն, ըսի, կարելի է զայն կոչել «երաժշտական ժամանակը» որովհետեւ ամենէն աւելի դիւրաւ անոր ինչութեան փորձը կրնանք ընել մեղեդիին մէջ ու երաժշտական ունկնդրութեան։ […] Պէռկսօն, մեր օրերու հանճարեղ յայտնատեսողը անոր, կոչած է զայն *Թանձրական* ու *լեցուն Տեւողութիւն*, ուրիշներ *Ապրուած ժամանակ* կըսեն իրեն։ Բայց խնդիր չէ անունը. ի՞նչ է ինք»[9] (ընդգծումները հեղինակինն են)։

Բերգսոնի «la duree» եզրույթը հայերեն կարելի է թարգմանել «տևում», «տևականություն» բառերով, որոնք, սակայն, լիովին չեն արտահայտում այդ հասկացության բերգսոնյան ընկալումը, ըստ որի՝ տևումը մարդուն բնորոշ կենսազգացողություն է, իրականության մեջ մարդու լինելության կերպը։ Բայց

---

[6] Տե՛ս նույն տեղը, էջ 6։
[7] Նույն տեղում, էջ 7։
[8] Նույն տեղում, էջ 12։
[9] Նույն տեղում, էջ 13-14։

քանի որ Պերպերյանն այն անվանում է «Տևողություն», ճիշտ կլինի օգտագործել հենց այդ բառը՝ հաշվի առնելով, որ մեզանում այն ունի նաև առաջին, չափվող, «ժամացուցային» ժամանակը ներկայացնելու գործառույթ: Մենք չափում ենք գործընթացների տևողությունը՝ ասելով, օրինակ, որ այսինչ գործընթացի տևողությունը մեկ ամիս է: Այնինչ Բերգսոնյան «la duree»-ն ֆիզիկոսների չափվող ժամանակի հակոտնյան է, հետևաբար հասկացութային շփոթ չառաջացնելու համար «la duree»-ն նշանակող «Տևողություն» բառը կարելի է գրել մեծատառով:

Փիլիսոփաները դարեր ի վեր անդրադարձել են ժամանակի հիմնախնդրին, սակայն Պերպերյան-Բերգսոն համատեքստը հասկանալու համար կարելի է առանձնացնել Արիստոտելի, Պլոտինոսի, Օգոստինոս Երանելու և Իմանուիլ Կանտի՝ ժամանակի ընկալումները[10]: Արիստոտելը ժամանակը կապում էր շարժման հետ՝ նշելով, որ ընկալելով շարժումը, մենք հասկանում ենք, թե ինչ է ժամանակը: Ըստ Արիստոտելի՝ «ժամանակը ոչ այլ ինչ է, քան շարժման թիվը (քանակը) նախորդի ու հաջորդի հետ հարաբերության մեջ»[11]: Պլոտինոսը, ընդհակառակը, ժամանակի էությունը թվի հետ կապելը սխալ էր համարում, քանի որ ժամանակը դիտարկում էր որպես որակ: Ըստ նրա՝ հոգին (ոչ թե անհատական մարդու, այլ համընդհանուր, համատիեզերական) Միասնականի նմանությամբ ստեղծում է զգայական, բազմակի աշխարհը, իսկ Հավերժության նմանությամբ՝ նրա շարժվող կրկնօրինակը՝ ժամանակը: Հետևաբար, ըստ Պլոտինոսի, «***ժամանակը հոգու կյանքն է*** որոշակի շարժման, այսինքն՝ մի վիճակից մյուսին անցման մեջ»[12] (ընդգծումն մերն է՝ Ս.Պ.): Բերգսոնի հայացքների զարգացման մեջ կարելի է նկատել ժամանակի հիմնախնդրի պլոտինոսյան լուծման արձագանքը և հակադրումն արիստոտելյանին: Չմոռանանք, որ նա, ի վերջո, կյանքի փիլիսոփա է: Սակայն եթե Պլոտինոսի հոգին համատիեզերական, համաշխարհային հոգին է, ապա ֆրանսիացի մտածողի վաղ շրջանի գործերում («Ժամանակը և ազատ կամքը կամ էսսե գիտակցության անմիջական տվյալների մասին», «Մատերիա և հիշողություն») խոսքը մարդկային հոգու մասին է[13]: Այդ երկերում Բերգսոնն իսկական ժամանակը համարում էր

---

[10] Ժամանակը որպես հիմնախնդիր հուզել է նաև XX դարասկզբի այնպիսի ականավոր փիլիսոփաների, ինչպիսիք են Էդմունդ Հուսեռլը և Մարտին Հայդեգերը: Վերջինս 1927-28 թթ. հրատարակության պատրաստելով ժամանակի ներքին գիտակցության ֆենոմենոլոգիայի մասին Հուսեռլի դասախոսությունները՝ ժամանակը դիտարկել է որպես գոյաբանության հիմք՝ իր հիմնարար «Կեցությունը և ժամանակը» երկում պնդելով, որ ժամանակի ճիշտ հասկացված և ճիշտ բացորոշված ֆենոմենի մեջ արմատացած է ողջ գոյաբանության կենտրոնական խնդրակարգը (տե՛ս **Хайдеггер М.**, Бытие и время, М., 1993): Պերպերյանը, ըստ ամենայնի, ծանոթ է եղել այս հեղինակների՝ ժամանակի մասին ուսմունքներին, սակայն նախապատվությունը տվել է Բերգսոնի տեսությանը, որը, ըստ էության, կարելի է համարել նորպլատոնական մոտեցման զարգացում XX դարի գիտապաշտական միջավայրում:

[11] **Արիստոտել**, Ֆիզիկա, V, 3, 219 a 10-14:

[12] **Պլոտինոս**, Էննեադներ, III, 7, 11:

[13] Տե՛ս **Bergson H.**, Time and Free Will, An Essay on the Immediate Data of Consciousness, Dover

մարդկային հոգու Տևողությունը, բայց արդեն «Ստեղծարար էվոլյուցիայում» տևելու հատկությունը վերագրում է կյանքին ընդհանրապես՝ գտնելով, որ ողջ տիեզերքը տևում է՝ խտանալով ու նոսրանալով իր ստեղծագործական պոռթկումների ու դրանց մեղմացումների հոլովույթում[14]: Չմոռանանք, որ Բերգսոնը ստեղծագործում էր մի դարաշրջանում, երբ տիրապետում էին պոզիտիվիստական մտածողությունը և գիտականության պահանջը, իսկ հոգու, աստվածայինի ու հավերժականի հետ կապված խնդիրները, մեղմ ասած, փակագծերի մեջ էին առնվում: Ելնելով գիտակցության անմիջական տվյալների ուսումնասիրությունից, ըստ էության բավականին գիտական մոտեցում ցուցաբերելով, Բերգսոնն այնուամենայնիվ ցույց է տալիս գիտապաշտական մոտեցման միակողմանիությունն ու փորձում մետաֆիզիկային վերադարձնել իր խնդիրների շրջանակը: Նա բանավեճ է վարում ֆիզիկոսների հետ՝ ցույց տալով, որ ֆիզիկայի ժամանակն ու իր նկարագրած Տևողությունը չեն կարող լինել նույնը[15]: Ֆիզիկոսները միշտ գործ ունեն քանակական, համասեռ ժամանակի հետ, իսկ Տևողությունը որակական է ու ոչ համասեռ՝ կախված իր բովանդակության ինտենսիվությունից: Իսկ ֆիզիկոսները, նույնիսկ հոգնակի ժամանակների մասին խոսելով, միևնույնն է, անտարբեր են ժամանակը լցնող բովանդակության հանդեպ:

Ժամանակի մասին ամենաազդեցիկ ուսմունքներից մեկը մշակել է Օգոստինոս Երանելին: Նա իսկական է համարում միայն ներկան՝ ասելով, որ անցյալն ու ապագան գոյում են միայն ներկայում: Պերպերյանը հիշատակում է ս. Օգոստինոսին՝ ժամանակի «այդ միւս մեծ ու հանճարեղ յայտնատեսող»ին, որը «կը սահմանէ Յաւերժը «Ներկայութիւնը Անցեալին, Ներկայութիւնը Ներկային ու Ներկայութիւնը Ապագային». ուրիշ խօսքով այն՝ որ ժամանակէն վեր՝ զայն, անոր բովանդակութիւնը, իր պարզ ու համապարփակ միութեանը մէջ ներկայ ունի»[16]: Ըստ Օգոստինոսի՝ կա երեք ժամանակ՝ անցյալի ներկան, ներկայի ներկան ու ապագայի ներկան: Դրանք գոյություն ունեն մեր հոգում, քանի որ որևէ այլ տեղում Երանելին ժամանակը չի տեսնում: «Անցյալի ներկան հիշողությունն է, ներկայի ներկան դրա անմիջական հայեցումն է, ապագայի ներկան սպասումն է»[17], - խոստովանում է նա: Բերգսոնի և նրան հետևող Պերպերյանի մոտեցումը նման է Օգոստինոսի այս լուծմանը, քանի որ նրանք նույնպես գտնում են, որ հիշողությունն անցյալի ներկան է: Բայց նրանք մի քայլ ևս առաջ են անցնում՝ նշելով, որ ապագան ոչ միայն և ոչ այնքան սպա-

---

Publications Inc., Mineola, NY, 2001, էջ 209:

[14] Տե՛ս **Bergson H.**, Creative Evolution // **Bergson H.**, Key Writings, Continuum, NY, London, 2002, էջ 171-184:

[15] Տե՛ս, օրինակ, **Бергсон А.** Длительность и одновременность (По поводу теории Эйнштейна), Петербург, 1923, էջ 150:

[16] **Շ. Ռ. Պերպերյան,** Երկու ժամանակները, էջ 37:

[17] **Օգոստինոս Երանելի**, Խոստովանություն, Գիրք տասնմեկերորդ, XX, 26:

սումն է, որքան անցյալի միջոցով ներկայի «ընդերքում» տեղի ունեցողի արդյունքը, քանի որ «երաժշտական» ժամանակի պարագայում յուրաքանչյուր ներկա հղի է ապագայով։

Պերպերյանն այդ մասին հետևյալ կերպ է արտահայտվում. «Ժամացուցային ժամանակի ապագան «դեռ անգոյ» մըն է, որուն՝ մեզմէ դուրս «ծոցէն» ամէն ակնթարթի նոր ներկայ մը կուգայ մեր դիմաց։ Ու մենք կը՛ընդունինք, կստանանք իբր կրաւոր դիրքով մը [...]։ Իսկ մեր Ներքին ժամանակի Ապագան, ամէն պահու, ոչ թէ մեր ներկային մէջ կուգայ, այլ այդ ներկայէն իսկ դուրս կելլէ, զայն լեցնող մեր ինքնութենէն *կ՛արտադրուի, կը շինուի*, վասն զի այս ապագան ուրիշ բան չէ, եթէ ոչ մեր անձին լինելութեան *բեղունութեանը* տրուած անուն մը ինքնին»[18] (ընդգծումները հեղինակինն են)։

Հետևելով Բերգսոնին, Պերպերյանը ցույց է տալիս, որ «երաժշտական» ժամանակի ներկան ոչ թե անցյալից ապագա գնացող ուղիղին տարված ուղղահայաց է, այլ եռանկյունի, որի հիմքն այդ ուղիղի վրա կարող է լինել փոքր կամ մեծ՝ կախված մեր ապրումների ներքին ուժգնությունից (Բերգսոնի եզրաբանությամբ՝ ինտենսիվությունից)։ Պերպերյանն ասում է, որ այդ եռանկյան հիմքը մեր հոգեկան պահերի պրկումն է, իսկ գագաթը՝ Ես-ի միությունը։ Հետևապես, ի տարբերություն ժամացուցային ժամանակի, այս ժամանակի Ներկան մի պահ չէ, այլ տևում է, Տևողություն։ Երաժշտական ժամանակը անցյալի պահերը «կը պահէ իր տեւող ներկային մէջ»[19], այլապես հնարավոր չէր լինի ընկալել ո՛չ երաժշտական գործը, մեղեդին, ո՛չ պոեզիան։ Մենք կարողանում ենք ընկալել մեղեդին, քանի որ դրա անցնող պահերը խտանում են «երկար, տեւող, հոծ ներկայի մը մէջ»։ Սա ոչ թե ֆիզիկական պահերի ամբողջությունն է, որը նկարագրվում է սոսկ ժամացուցային ժամանակի միջոցով՝ ջնջվելով «հետզհետէ, ակնթարթ առ ակնթարթ, այլ անոնց երաժշտական իմաստի իրականութիւնն է, անոնց ոգեկան նշանակութիւնն է»[20]։

Պերպերյանը «երաժշտական» ժամանակը ներկայացնում է որպես Ներքին ժամանակ՝ բնորոշ մեր ներաշխարհին, իսկ ժամացուցային ժամանակը, ըստ նրա, «արտաշխարհի» բնութագիրն է։ Փոքր-ինչ շեղվելով քննարկվող խնդրից՝ նշենք, որ, ի տարբերություն «ներաշխարհ» եզրույթի, որ հայերեն իմաստասիրական խոսույթի անբաժան մասն է դարձել, «արտաշխարհ» եզրը մեզանում հազվադեպ է օգտագործվում, այնինչ ներաշխարհ-արտաշխարհ հակադրությունն արտահայտչական մեծ ներունակություն է պարունակում, և Պերպերյանի երկերին անդրադառնալն օգտակար կլինի նաև հայոց իմաստասիրական եզրաբանության ճշգրտման տեսանկյունից։

Վերադառնալով Պերպերյանի՝ մեծատառով նշանակված Ներքին ժամա-

---

[18] **Շ. Ռ. Պերպերյան,** Երկու ժամանակները, էջ 30-31։

[19] Նույն տեղում, էջ 19-20։

[20] Նույն տեղում։

նակի խնդրին՝ տեղին է հիշատակել ժամանակի մասին նոր դարաշրջանի ամենահայտնի ուսմունքը՝ Իմանուիլ Կանտի տեսությունը ժամանակի ու տարածության՝ որպես զգայականության ապրիորի ձևերի մասին: Ըստ Կանտի՝ մարդկային ճանաչողությանն ի սկզբանէ բնորոշ է արտաքին աշխարհից ստացված տվյալների դասակարգման «նախակարողություն» կամ նախապայման, որն էլ հնարավորություն է տալիս մեզ իրերն ընկալելու տարածության ու ժամանակի մեջ: Սակայն տարածությունն ու ժամանակը ինքնին գոյություն ունեցող և իրերին ինքնին բնորոշ բաներ չեն: Ըստ Կանտի՝ «ժամանակը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր ներքին զգացման, այսինքն՝ մեր և մեր ներքին վիճակի հայեցման ձև»[21]: Իր այս միտքը խորացնելով՝ Կանտը պնդում է, որ ժամանակը չի կարող լինել արտաքին երևույթների որոշարկում, քանի որ այն չի պատկանում ո՛չ պատկերին, ո՛չ դրությանը, բայց այն կարող է որոշարկել պատկերների հարաբերությունը մեր ներքին վիճակի մեջ: Եվ մենք ժամանակը պատկերացնում ենք որպես անվերջ ձգվող գիծ, որում բազմազանը կազմում է միայն մեկ չափում, սակայն մենք մոռանում ենք, որ գծի վրայի կետերը գոյություն ունեն միաժամանակ, այնինչ ժամանակի մասերը՝ միայն մեկը մյուսից հետո[22]: Ընդունելով ժամանակի էմպիրիկ ռեալությունը, բայց ժխտելով դրա բացարձակ ռեալությունը՝ Կանտը ներկայացնում է իր ընդդիմախոսների առարկությունը և փորձում փարատել այն: «Առարկությունը հետևյալն է. փոփոխություններն իրական են (դա ապացուցում է մեր սեփական պատկերացումների փոփոխվելը, նույնիսկ այն դեպքում, եթե մենք ցանկանայինք ժխտել բոլոր արտաքին երևույթներն իրենց փոփոխություններով հանդերձ): Ու քանի որ փոփոխությունները հնարավոր են միայն ժամանակի մեջ, հետևապես ժամանակը իրական մի բան է»[23]: Կանտը լիովին ընդունում է այդ փաստարկը՝ ասելով, որ ժամանակն իրոք իրական մի բան է, սակայն ընդամենը ներքին հայեցողության իրական ձևն է: Ժամանակն իրական է ոչ թե իբրև օբյեկտ, այլ իբրև պատկերացման եղանակ[24]:

Բերգսոնն ուսումնասիրում է ժամանակի կանտյան ուսմունքը՝ դրա սահմանափակությունները հաղթահարելու նպատակով: Չմոռանանք, որ Կանտը սահմանափակել էր գիտելիքը՝ հավատի համար տեղ ազատելու միտումով: Այնինչ Բերգսոնը ցանկանում էր մարդկային մտածողության հնարավորություններն օգտագործելով՝ մոտենալ այն բոլոր խնդիրներին, որոնք իր ժամանակի մտածողները «մետաֆիզիկական» պիտակելով՝ դուրս էին թողնում այսպես կոչված «գիտական» խոսույթից: Բերգսոնը, Կանտին նվիրված իր դասախոսություններում քննարկելով կանտյան անտինոմիաները, ձգտում էր ուղի

---

[21] **Ի. Կանտ,** Զուտ բանականության քննադատություն, Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, Եր., 2006, էջ 74:
[22] Տե՛ս նույն տեղը:
[23] Նույն տեղում, էջ 76:
[24] Տե՛ս նույն տեղը, էջ 77:

գտնել դրանցից՝ նշելով, որ Կանտի փիլիսոփայությունն «ապրում և մեռնում է» այդ անտինոմիաների միջոցով[25]: «Աշխարհը սկիզբ ունի ժամանակի մեջ» և «Աշխարհն անսկիզբ է ժամանակի մեջ», «Մարդը կատարելապես ազատ է» և «Աշխարհում ամեն ինչ կատարվում է անհրաժեշտության օրենքի համաձայն» դատողություններն այն ծայրահեղ դրույթներն են, որոնք հակասում են միմյանց, բայց բանականությունն իր կարողությունների սահմանափակության պատճառով չի կարող ընտրել դրանցից որևէ մեկը՝ ընկնելով անտինոմիական վիճակի մեջ: Բերգսոնը, փորձելով հաղթահարել կանտյան փիլիսոփայության այս արգելքը, ներմուծում է ինտուիցիայի գաղափարը՝ որպես առօրյա աշխարհում գոյատևելուն օգնող ինտելեկտի հակոտնյա: Ինտուիցիան հնարավորություն է տալիս մեկ հպումով ընդգրկելու անսահմանն ու կապակցելու անցյալը, ներկան ու ապագան մեկ միասնական իմացական ակտի մեջ: Երբ մարդը մտածում է Տևողության տեսանկյունից, մարդկային մտքի սահմանափակումները վերանում են, անտինոմիաները՝ լուծվում, քանի որ մարդուն պատկերանում է իրական աշխարհ-կյանքն իր ամբողջականության մեջ: Վերոնշյալ անտինոմիաների դրույթներն ու հակադրույթները ճշմարիտ են այն դեպքում, երբ ժամանակը դիտարկվում է տարածության համանմանությամբ: Բերգսոնը պնդում է, որ մարդու ինտելեկտն ունի ամեն ինչ «տարածականացնելու» հատկություն. այն «տարածականացնում» է անգամ ժամանակը, որն էլ մեծագույն սխալն է: Տարածությունն էքստենսիվ է, այն «սփռվում» է նույն կերպ, տարածության տարբեր կետերը համասեռ են: Տարածությունը քանակի աշխարհն է: Այնինչ ժամանակը տարածական չէ, քանի որ այն կարող է «հոսել» տարբեր կերպ, ունենալ ընթացքի մեծ ու փոքր ինտենսիվություն: Բերգսոնը տարբերակում է քանակապես հաշվելի, այսպես կոչված «տարածականացված» ժամանակն իսկական Ժամանակից, որի տարբեր պահերն ունեն տարբեր որակներ և սերտորեն կապված են իրենց բովանդակության հետ: Բերգսոնն իր՝ ժամանակի մասին ուսմունքով փորձում է հաղթահարել նաև մարդու կամքի ազատության կանտյան անտինոմիան, քանի որ մարդուն ընկալում է որպես մի էակի, ով ողջ տիեզերքի համաբանությամբ օժտված է ստեղծարար ազատությամբ: Պատահական չէ, որ գիտակցության անմիջական տվյալների մասին իր էսսեն նա վերնագրել է «Ժամանակը և ազատ կամքը»[26]:

Ժամանակի մասին Բերգսոնի ուսմունքի հենց այս կողմն է, ըստ երևույթին, ոգևորել Շահան Պերպերյանին տարբերակելու «ժամացուցային» ու «երաժշտական» ժամանակները և մեր հայրենակիցներին բերելու ազատության ու ո-

---

[25] Տե՛ս **Pearson K.A., Mullarkey J.**, Introduction // **Bergson H.**, Key Writings, Continuum, NY, London, 2002, էջ 45:

[26] Տե՛ս **Bergson H.**, Time and Free Will, An Essay on the Immediate Data of Consciousness, Dover Publications Inc., Mineola, NY, 2001:

գեղենության մասին այս նոր խոսույթը: Նա նշում է, որ, ի տարբերություն «ժամացուցային», առարկայական ժամանակի, որի անցյալն անհետ գնում է՝ մարդու մեջ թողնելով անընդհատ մահացման ու ժամանակի ընթացքին դեմ հանդիման գնալու անզորության զգացողությունը, «երաժշտական» ժամանակի «անցեալը կենդանի Ներկայութիւն մը կը պահէ մեր անձին մէջ, անոր բուն, անմիջական Ներկային ետին»[27]: Անցյալը, ըստ Պերպերյանի, ներկայում կենդանի գոյություն ունի երկու առումով: Նախ՝ քանի որ այն ոչ թե «մեռած–բեռ մեր անձին ետին» է, այլ մեր հոգու ուժերը սնող կենսահյութն է, որ իրենով պայմանավորում է ներկայի ինչպիսին լինելը: Եվ երկրորդ՝ անցյալը մեկ անգամ և ընդմիշտ տրված նույն կերպարանքով չի մնում մեր «Նոր Ներկայէն դէպի ինքը ուղղուած մեր նայուածքին: Ինչպէս ինքը կենդանի կերպով կ՚ազդեր մեր Ներկային վրայ, իր կարգին ինք եւս կ՚ազդուի Նոր Ներկայէն, ու անոր դէպի իր ետին արձակած լոյսին տակ կրնայ վերանորոգել իր կերպարանքը»[28]: Մեր անցյալը, ըստ Պերպերյանի, ոչ միայն սոսկ անցյալում կատարված իրողություններից է բաղկացած, այլև այն բարոյական-հոգեբանական կերպարանքից ու նշանակությունից, «որով այդ իրողութիւնները կ՚երեւին մեզի մեր Ներկայի մէջ, վերազդելու համար անոր վրայ»[29]:

Համանմանորեն, առարկայական ժամանակի ապագան գալիս է դրսից՝ որպես տրվածություն, այնինչ Ներքին ժամանակի ապագան անցյալի նման միշտ կենդանի գոյություն ունի ներկայում, այն պատկանում է մեզ, և Պերպերյանն այն որակում է ազատ. «Ազատ, ոչ թէ որովհետեւ պատճառուած չէ, ոչ ալ որովհետեւ պատահական է, այլ որովհետեւ մեր անձէն իսկ ու միայն՝ պատճառուած է»[30]: Հետևապես, անկախ այն բանից, թե ինչ արտաքին դեպքեր են պատահում մարդու հետ, իր իսկական անցյալի ու ապագայի կերտողն ու վերակերտողը մարդն ինքն է: Եվ սա ճիշտ է թե՛ անհատական մակարդակում, թե՛ հասարակական: Հետևաբար, ըստ Պերպերյանի, թե՛ առանձին անհատը, թե՛ հանրույթը (տվյալ դեպքում՝ հայերս) պետք է ապրեն ոչ թե «ժամացուցային» ժամանակով՝ «առարկայացնելով» մեր ինքնությունը, նրա խորհուրդներն ու զգացումները, և տառապելով այդ համատեքստում դրանց անխուսափելի «խուսափման ցավով», այլ պետք է մշակեն իրենց ուրույն Ներքին ժամանակը,

---

[27] **Շ. Ռ. Պերպերյան,** Երկու ժամանակները, էջ 30:

[28] Նույն տեղում, էջ 29:

[29] Նույն տեղում, էջ 30: Բերգսոնի ուսմունքում էլ է նկատելի այս պահը: Բերգսոնիզմի մեծ գիտակ Ժիլ Դելյոզը պնդում է, որ Բերգսոնի համար ներկան անցյալի ամենասեղմված մակարդակն է, քանի որ անցյալը համագոյակցում է իր սեփական ներկայի և ինքն իր հետ սեղմման տարբեր մակարդակներում (տե՛ս **Делез Ж.** Бергсонизм // **Делез Ж.** Эмпиризм и субъективность, опыт о человеческой природе по Юму. Критическая философия Канта. Бергсонизм. Спиноза. М., 2001, էջ 285):

[30] **Շ. Ռ. Պերպերյան,** Երկու ժամանակները, էջ 32:

իրենց Տևողության սեփական ընթացքը՝ չտրվելով արդի «մեքենայական» աշխարհի կործանարար ընթացքին։

Ներքին ժամանակի մասին Պերպերյանի արևմտահայերեն իմաստասիրական խոսույթի գեղեցկությունն ու արտահայտչական խորությունը լիովին ցուցադրելու նպատակով նրա դատողություններից մի հատված մեջբերենք ամբողջովին. «Անշուշտ մեծապէս մտազանցական՝ մեր կայական, «Եղէական» բանականութիւնը խորապէս ապշեցնող բան է ինքնին իր կարգին այդ Ներքին ժամանակը. քանի որ բազմաթիվ հակասութեանց գրեթէ անըմբռնելի հաշտեցում մը կ՚ենթադրէ ան. այդ ժամանակը ու անով զինքը ընող կեանքը *կ՚անցնի* բայց իբր անցած իսկ *կը մնայ. ներկայ* է բայց լինող, նորոգուող, *ապագայ* եղող ներկայ... *փոխուող* ու *Տեւող* միանգամայն։ Ուրեմն իսկապէս ու խորապէս ***բառատոքսալ – խորհուրդ – հրաշք – իրականութիւն*** մը»[31] (ընդգծումները հեղինակինն են)։ Եվ այդ հրաշք-իրականություն խորհուրդը տանում է դեպի ավելի մեծ խորհուրդ, գերազանց գիտակցում, որ Ներքին ժամանակը հավերժի հանգունակն* է, հավերժի ներկայությունն է մեր մեջ։

Իհարկե, Պերպերյանը ենթադրում է, որ կարող են հնչել սուբյեկտիվության մեղադրանքներ, որ ներքին ժամանակը խորապես անհատական է, սուբյեկտիվ, ու նման հնարավոր առարկություններին պատասխանում է հետևյալ կերպ։ Նախ՝ ներքին ժամանակը չի բացառում արտաքին ժամանակը, որում գոյում է աշխարհը։ Երկրորդ՝ ներքին ժամանակն իր մեջ ունի հավաքական ոգեկան լինելության միանգամից տրվածության հնարավորությունը, որը կարող է ծնել հավաքական ներքին ժամանակը, այսինքն՝ Պատմությունը։ Ժողովուրդը, ըստ Պերպերյանի, ազգ է դառնում, երբ իր գոյությունն ու լինելությունը բարձրացնում է ոգեկան մակարդակի։ Ազգը, կազմելով իր պատմությունը, դառնում է «-Հաւաքական անձնաւորութիւն»՝ իր արտաքնապես անցնող ու ջնջվող կյանքը ազատագրելով Արտաքին ժամանակի ջնջող վազքից ու հաստատելով հավաքական ներքին թանձրական Տևողության մեջ։ Պատմությունը, ըստ Պերպերյանի, նույնպես երկու ձևով կարելի է մտածել։ Եթե այն մտածենք Արտաքին ժամանակի հղացքով, այսինքն՝ որպես նյութական իրողությունների գումար, մեզ կպարուրի տրտմությունը, քանի որ մեր պատմությունը մեզ կներկայանա որպես նյութական կորուստների շարան։ «Բայց երբ զայն մտածենք ու խորզգանք իբրեւ հաւաքական թանձրական ***Լինելութեան*** մը ոգեկան իրականութիւնը մեզ տուող՝ այսինքն բո՛ւն Պատմութիւն, պիտի ունենանք զայն այս անգամ ընդհակառակը իբրեւ մեր ազգային կեանքը ներշնչող հերոսական ոյժի մը մշտահոս աղբիւր»[32] (ընդգծումը հեղինակինն է)։ Եվ Պերպերյանը հավատում է, որ այդ դեպքում «անցած փառքերը» կարթնանան ու նոր փառքեր կյանքի կկոչեն։

Ու ազգը հավերժ գոյություն կունենա այն դեպքում, երբ կարողանա իր թե՛

---

[31] Նույն տեղում, էջ 36։

* Պերպերյանը «հանգունակ» եզրն է օգտագործում որպես «անալոգ»-ի հայերեն տարբերակ։

[32] **Շ. Ռ. Պերպերյան,** Երկու ժամանակները, էջ 43։

ներկայի, թե՛ պատմության ողջ բովանդակությամբ մտածել ու զգալ ինքն իրեն՝ իր ներկան դարձնելով դարերի կյանքով ներթափանցված լիություն, լուսավոր ճանաչում, իսկ ապագան՝ իր ճիգը ներշնչող զորություն: Եվ պատահական չէ, որ մի շարք առասպելներում կասկածից ծնվում են չարը, թուլությունը, կործանման նախասերմը: Եթե մենք չմոռանանք, որ մեր յուրաքանչյուր «այսօր» ներունակորեն պարունակում է «վաղը», կմաքրենք «այսօր»-ն ինքնադատապարտումից, թուլացնող մտքերից, կործանման կանխազգացումներից, կսովորենք վեր կանգնել մասնատվողականությունից և, հակառակը, կմշակենք մեր ներքին միասնականությունը, ոգեղենը, ուժականությունը*, այն, ինչը մեր՝ որպես ազգի՝ Տնողության հիմքն է: Եվ որքան մեր «այսօր»-ները ներթափանցված լինեն այդ ուժականությամբ, այդքան բաղձալի ապագայի հնարավորությունը ավելի ու ավելի իրական կդառնա:

Սակայն միայն ապագային սպասելը ճիշտ չէ, քանի որ սպասված արքայությունը, ըստ Պերպերյանի, հոգու մշտատև ներկայությունն է, իսկ սրբերն այս անկատար կյանքում ապրելով իսկ երջանիկ են, քանի որ գտել են իրենց արքայությունը, այլ ոչ թե սպասում են, որ այն վերջում է գալու: Իսկ ովքեր սպասում են, նրանք սխալ են հասկանում հավերժությունը. «Այսինքն մարդեր կը կարծեն, որ վերջը գալիք բան մըն է ատիկա: Ո՛չ առաջ է, եւ ո՛չ ալ ետքը, այլ արդեն ժամանակները իր մէջ ունեցողն է, ուրիշ խօսքով՝ բոլոր ժամանակներն է»[33]: Ուրեմն, մարդը պետք է ճիգ գործադրի՝ պահելու հոգու մշտատև ներկայությունն իր մեջ, դրանով իսկ հաղորդակից լինելով ու գոյելով հավերժության մեջ...

СИЛЬВА ПЕТРОСЯН – ***Очерк Шагана Перперяна «Два времени» в контексте философских размышлений о природе времени.*** – Статья посвящена критическому анализу очерка «Два времени» Шагана Перперяна, одного из интереснейших представителей западноармянской философской мысли XX века. Взгляды Перперяна о времени не были анализированы в философской литературе, и цель статьи – показать особенности восприятия времени Перперяном в контексте истории философии. Для этого в статье представлены учения о времени Аристотеля, Плотина, Августина Блаженного, Канта и Бергсона и их связь с воззрениями Перперяна. В статье показано, что Перперян в вопросе времени по существу продолжает линию неоплатонизма, находясь под особым влиянием учения Бергсона о длительности.

Перперян различает так называемые «часовое» или внешнее и «музыкальное» или внутреннее времена, отдавая предпочтение последнему. Внутреннее время, по его словам, имеет внутри себя возможность данности коллективной духовности сразу. Перперян показывает, что благодаря способности длиться человек обретает творческую свободу и может формировать не только свое будущее, но и свое прошлое. Точно так же, по мнению западноармянского мыслителя, народ становится нацией тогда, когда поднимает свое существование и бытие на духовный уровень. Нация, конструируя свою историю, становится «коллективной личностью», освобождая свою внешне преходящую и удаляющуюся жизнь от стирающего хода внешнего времени и утверждая ее в

---

* Դինամիզմ:

[33] **Շ. Պերպերյան,** Սրբութիւնները եւ Սուրբը // **Շ. Պերպերյան,** Թելադրանք հոգեւորականներու, Երուսաղէմ, 2002, էջ 40:

коллективной внутренней плотной Длительности.
Перперян связывает владение внутренним временем с наличием души, святостью, отмечая, что люди неправильно понимают вечность, думая, что она придет в конце. А блаженный, святой человек уже находится в вечности, потому что все времена он несет в себе.

Ключевые слова: «*часовое*» *и* «*музыкальное*» *время, Внутреннее время, Длительность, Перперян, Бергсон, Августин, Кант*

SILVA PETROSYAN – *Shahan Perperyan's Work "The Two Times" in the Context of Philosophical Reflections Concerning the Time.* – The article is dedicated to the critical analysis of the work "The Two Times" by Shahan Perperyan, one of the most interesting representatives of the Western Armenian philosophical thought of the 20th century. Perperyan's teaching about time has not yet been subject to historical-philosophical analysis, and the purpose of the article is to show the peculiarities of Perperyan's perception of time in the context of the history of philosophy. In order to do this, the views of Aristotle, Plotinus, Augustinos Aurelius, Kant and Bergson on time were presented and analyzed from the point of view of their relationship with Perperian's teaching. It has been shown that Perperian's approach essentially continues the line of Neo-Platonism, being particularly influenced by Bergson's concept of Duration.
Perperian distinguishes between so-called "clock" or external and "musical" or internal times, giving preference to the latter. Internal time, according to him, has the possibility of having in it collective spirituality at once. Perperyan shows that thanks to the ability to endure, a person gains creative freedom and can shape not only his future, but also his past. Similarly, according to the Western Armenian thinker, a people becomes a nation when it raises its existence and being to a spiritual level. The nation, constructing its history, becomes a "collective personality", liberating its outwardly transitory and erasing life from the erasing course of external time and establishing it in the collective internal dense Duration.
Perperyan connects the mastery of inner time with the presence of the soul, sanctity. He notes that people misunderstand eternity, thinking that it will come at the end, and waiting for it. However, a blessed, holy person is already living in eternity, because he carries all the times within him.

Key words: *“clock” and “musical” time, Inner time, Duration, Perperyan, Bergson, Augustine, Kant*